կան թափ կայ նրա հետեւեալ տողերի մէջ.—

Իսկ թէ կորնչի պիտի իմ հուսկ շունչ
Հոս մառախուղի մէջ համր անշըշունչ,
Այժմէն թո՛ղ որ շանթ մ'ըլլամ դալկահար,
Պըլլուիմ անուանդ, մոնչեմ անդադար,
Թո՛ղ անէծք մ'ըլլամ ու կողդ խրիմ,
Թո՛ղ յորջորջեմ քեզ «Աստուա՛ծ ոխերիմ»:

Նրա ներքինը դժոխքի նման փրփրում է, նա դողդողում է, նոճիների նման հեծում, հառաչում: Նա նման է «աշնան չոր տերեւի»: Ապա յիշում է իր սիրոյ կարօտը եւ աղաչում է, որ իրեն «կայծ» տրուի, որովհետեւ ապրել է ուզում:

Ո՞հ, կայծ տըւէք ինձ, կա՛յծ տըւէք, ապրի՞մ...
Ի՞նչ, երազէ վերջ գըրկել ցուրտ շիրի՞մ...
Այս նակատագիրը ի՞նչ սեւ է, Աստուա՛ծ,
Արդեօք դամբանի մրուրո՞վ է գրծուած...
Ո՞հ, տըւէք հագուցս կրակի մի կաթիլ,
Սիրե՞լ կ'ուզեմ դեռ 'ւ ապրիլ ու ապրիլ...
Երկնքի աստղեր, հոգւոյս մէջ ընկէ՛ք,
Կա՛յծ տըւէք, կեա՛նք՝ ձեր սիրահարին հէք:

Բանաստեղծը նկատում է, որ իր այդ աղերսն էլ մնաց «ձայն բարբառոյ յանապատի», յուսահատւում է եւ պատմում իր ողբալի կացութիւնը:

Գարունն ո՛չ մէկ վարդ նակտիս դալկահար,
Ո՛չ երկնի շողերն ժըպիտ մ'ինձ չե՛ն տար.
Գիշերն միշտ դագաղ, աստղերը ջահեր,
Լուսինն յար կուլայ խուզարկէ վրեհեր.
Կ'ըլլան մարդիկ, որ լացող մը չունին,
Անոր համար նա դըրաւ այդ լուսին.
Եւ մահամերձն ալ կ'ուզէ երկու բան.
Նախ կեա՛նքը, վերջը լացող մ'իր վըրան:

Այլեւս ոչ մի կասկած չունենալով այն մասին, որ ինքը պիտի մեռնի, նա երգում է սիրոյ, կեանքի եւ աշխարհի ունայնութիւնը: Մինչդեռ ուրիշ բանաստեղծներ եւ փիլիսոփաներ շատ ապրելուց, կեանքը վայելելուց, շատ սիրելուց եւ երջանիկ օրեր անցկացնելուց յետոյ են ձանձրանում, դառնում յոռետես, թըշուառ՝ Դուրեանը ծաղիկ հասակումն է ծծում կեանքի մրուրը եւ դառնութիւնները, քսան տարեկանում է խորապէս զգում մեր աշխարհի ունայնութիւնը: —

Ի զո՞ւր գըրեցին աստղերն ինձի «սէր».
Եւ ի զո՞ւր ուսոյց բուլբուլն ինձի «սիրել»,
Ի զո՞ւր սիւգեր «սէր» ինձ ներշնչեցին,
Եւ զիս նորատի ցուցուց ջինջ ալին,
Ի զո՞ւր թաւուտքներ լըռեցին իմ շուրջ,
Գաղտնապահ տերեւք չառին երբեք շունչ,
Որ չը խըռովեն... երազքս վսեմ
Թոյլ տըւին, որ միշտ ըզնէ երազեմ,
Եւ ի զո՞ւր ծաղկունք, փրթիթներ գարնան՝
Միշտ խնկարկեցին խոկմանցս խորան...
Ո՞հ, նոճա ամէնքը զիս ծաղրեր են...
Աստուծոյ ծաղրն է աշխարհն ալ արդէն...

Այս վերլուծութիւնից անշուշտ պարզուեց ամէնքի համար, որ «Տրտունջ»ը ո՛չ թէ միայն Դուրեանի թագն ու պսակն է, այլ եւ իրօք մեր քնարական բանաստեղծական գրականութեան գոհարներից մէկն է, որ 55 տարուց յետոյ էլ չի կորցրել իր փայլը:

Մօր «արտասուքը» տեսնելով Դուրեանը հրաշակերտեց իր տրտունջները, իսկ մօր աղօթքը նրան դրդեց գրելու «Զղջում»ը, որի մէջ նա թողութիւն է հայցում Աստծուց եւ որոշ չափով թուլացնում է «Տրտունջ»ի թողած ուժեղ տպաւորութիւնը: Սակայն, նման «Զղջում»ները չեն խանգարում, որ մենք «Տրտունջ»ը վերցնենք առանձին եւ նրան պատուաւոր տեղ յատկացնենք հայոց գրականութեան մէջ:

Մեզ մնում է մի քանի խօսք էլ ասել այն մասին, թէ ինչ նշանակութիւն ունի Դուրեանը հայ գրականութեան համար:

Իր խորունկ ապրումները եւ հեծեծանքները ու տրտունջները նա չէր կարող արտայայտել մեռած, գրաբառ լեզուով, ուստի որոշ չափով ազդուելով Ալիշանից եւ Պեշիկթաշլեանից, նա գրում է արեւմտեան աշխարհաբարով: Կարելի է ասել, որ նա աշխարհաբարով սկսողների շարքում առաջինն է արեւմտահայոց մէջ՝ իր լեզուի մաքրութեամբ եւ գրաւչութեամբ: Նրա լեզուն Շանթի լեզուի ճկունութիւնն ունի:

Դուրեանի ոճն անզուգական է, իւրայատուկ եւ բնորոշ, ուժեղ եւ պատկերաւոր, խոր եւ բովանդակալից, պարզ ու գեղարուեստական իր արտայայտութեան ձեւերով: Նրա բանաստեղծութիւնները ներդաշնակ երգեր են, ինքնաբուխ եւ սահուն, գրաւիչ, անգամ դիւթիչ: Նրա հետ կարելի է համեմատել այնպիսի